# «ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ**

**«ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 2013 թվականի դեկտեմբերի 28-ի ՀՕ-154-Ն «Պետական նպաստների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 15-րդ և 17-րդ հոդվածների 1-ին մասերի 2-րդ կետերում «սույն օրենքի 11-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված ժամկետում» բառերը փոխարինել «դիմելու ամսվան հաջորդող 12-րդ ամսվա ընթացքում» բառերով:

**Հոդված 2.** Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) ընտանիքի կայուն եկամտի ձևավորման դրամագլուխը.»:

**Հոդված 3.** Օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասից հանել «և հրատապ օգնությունը» բառերը:

**Հոդված 4.** Օրենքի 15-րդ և 17-րդ հոդվածների 1-ին մասերի 3-րդ կետերից հանել «անհարգելի պատճառով» բառերը:

**Հոդված 5.** Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) դիմելու ամսվան հաջորդող 12-րդ ամսվա ընթացքում տարածքային կենտրոն անհրաժեշտ փաստաթղթերը չներկայացնելու դեպքում.»:

**Հոդված 6.** Օրենքի 5-րդ գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**«ԳԼՈՒԽ 5**

**ԸՆՏԱՆԻՔԻ ԿԱՅՈՒՆ ԵԿԱՄՏԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ**

**Հոդված 18. Ընտանիքի կայուն եկամտի ձևավորման դրամագլուխ ստանալու իրավունքը և տրամադրման հիմքը**

1. Ընտանիքի կայուն եկամտի ձևավորման դրամագլուխ ստանալու իրավունք ունի ընտանիքի սոցիալական գնահատման համակարգում հաշվառված սոցիալապես անապահով ճանաչված ընտանիքը:
2. Ընտանիքի կայուն եկամտի ձևավորման դրամագլխի տրամադրման

համար դրամական միջոցների ծավալը՝ ըստ տարածքային կենտրոնների, որոշվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով ընտանեկան և սոցիալական նպաստի համար նախատեսված դրամական միջոցներից՝ յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած չափով:

3. Ընտանիքի կայուն եկամտի ձևավորման դրամագլխի չափը, տրամադրման կարգը և պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

**Հոդված 7.** Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասում «Նպաստառուի» բառը փոխարինել «»Ընտանեկան կամ սոցիալական նպաստ ստանալու իրավունք ունեցող ընտանիքի անդամի մահվան կամ նպաստառուի» բառերով:

**Հոդված 8.** Օրենքի 35-րդ հոդվածը 6-րդ մասից հետո լրացել հետևյալ բովանդակությամբ 7-րդ մասով.

«7. Ընտանեկան կամ սոցիալական նպաստ ստանալու իրավունք ունեցող ընտանիքի անդամի կամ նպաստառուի կամ կենսաթոշակառուի մահվան դեպքում հուղարկավորությունը կատարած անձին նշանակվում է թաղման մեկ նպաստ՝ սույն օրենքով կամ «Պետական կենսաթշակների մասին» օրենքով, կամ «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքով:»:

**Հոդված 9.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, բացառությամբ սույն օրենքի 2-3-րդ և 6-8-րդ հոդվածների, որոնք ուժի մեջ են մտնում 2021 թվականի հունվարի 1-ից: